

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՓԱՐՄԱԴԱՆՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ ՄՄԲԱՏԻ

**ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈՒՄԱՆ
ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ**

Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մաս-
նագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գի-
տական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2015

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Հարությունյան Վլադիմիր Լիպարիտի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Սալնազարյան Աշոտ Բորիսի

տնտեսագիտության թեկնածու
Թամազյան Արթուր Ռաֆիկի

Առաջատար կազմակերպություն՝

Հայ-Ռուսական (Սլավոնական)
համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015թ. մարտի 26-ին ժամը 15³⁰-ին Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող ՀՀ ԲՈՆ-ի տնտեսագիտության թիվ 014 մասնագիտական խորհրդում:

Հասցե՝ 0025, Երևան, Մ. Նալբանդյան 128:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015թ.փետրվարի 26-ին:

014 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Ս.Ա.Գևորգյան

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Բոլոր ժամանակներում պետական բյուջեի եկամուտների ավելացումը եղել և շարունակում է մնալ տնտեսական քաղաքականության գերակա ուղղություններից մեկը: Այս համատեքստում, առավել արդիական են դառնում հարկային եկամուտների և դրանց կառուցվածքի վերլուծության, հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները:

Հարկային վարչարարության բարեփոխման գերակայությունները պետք է ուղղված լինեն երկարաժամկետ հեռանկարում հարկային վարչարարության արմատապետ նոր համակարգի ձևավորմանը: Դրանք նպաստավոր պայմաններ կստեղծեն հարկային եկամուտների հավաքագրմանը, հարկային բեռի օպտիմալ բաշխմանը, հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացմանը, գործարար ակտիվության աշխուժացմանը:

Հետևաբար՝ հարկային վարչարարության բարեփոխումները ցանկացած տնտեսության զարգացման գլխավոր նախապայմաններից են: Տնտեսական բարեփոխումների արդի փուլում ՀՀ տնտեսության, գործարար ակտիվության վիճակը պայմանավորված են նաև հարկային վարչարարության հիմնախնդիրներով, ինչպիսիք են տնտեսվարող սուբյեկտների մոտ թերհայտարարագրվող հարկային եկամուտներն ու ստվերային գործարքները, անփաստաթուղթ ապրանքաշրջանառությունը, երկակի հաշվապահական հաշվառման վարումը, կոռուպցիոն և վարչարարական ռիսկերը և այլն: Այսինքն՝ հարկային վարչարարության բարեփոխումները հրատապ են դառնում ՀՀ տնտեսության զարգացման համար, իսկ դրանց գերակայությունները պետք է լինեն հարկային ներուժի բացահայտումը, ստվերային տնտեսության կրճատումը, գործարար ակտիվության բարձրացումը: Այդ հիմնախնդիրներով էլ պայմանավորված է թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության հիմնական նպատակն է բացահայտել հարկային վարչարարության հիմնախնդիրները և առաջարկել հարկային վարչարարության բարեփոխման գերակայությունները: Այս նպատակին հասնելու համար ատենախոսությունում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- բնորոշել հարկային վարչարարության բովանդակությունը, նրա սկզբունքները, մեթոդներն ու գործառույթները,
- առանձնացնել հարկային վարչարարության վերաբերյալ գոյություն ունեցող վերլուծությունները, ինչպես նաև խմբավորել դրանք ըստ տարբեր խմբերի,
- իրականացնել համեմատական վերլուծություն հարկային վարչարարության և հարկային հսկողության միջև,
- ուսումնասիրել մրցունակ հարկային համակարգի և հարկային վարչարարության ձևավորման ուղղությունները,
- վերլուծել հարկային վարչարարության արտերկրյա փորձը և դրա տեղայնացման ուղիները ՀՀ-ում,
- գնահատել հարկային ներուժը և դրա վրա ազդող գործոնները ՀՀ-ում՝ նպատակ ունենալով կրճատել ստվերային տնտեսության ծավալները,

– առաջարկել հարկային վարչարարության բարելավման և մրցունակ հարկային համակարգի ձևավորման ուղիները ՀՀ-ում:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը ՀՀ հարկային համակարգն է և այն բնութագրող տարրերը, իսկ հետազոտության առարկան՝ հարկային վարչարարության բարեփոխման գերակայությունները:

Հետազոտության տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը: Հետազոտության համար տեսական հիմք են հանդիսացել հարկային վարչարարության մասին հայ և օտարազգի տնտեսագետների կողմից լայն ճանաչում ստացած հրապարակումները, աշխատություններն ու մենագրությունները, ինչպես նաև առաջադրած հիմնարար տեսական ու վերլուծական բնույթի դրույթները:

Հետազոտությանն անհրաժեշտ տեղեկատվական հիմքերն են Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության (ՀՀ ԱՎԾ) հրապարակումները, ՀՀ ֆինանսների նախարարության, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) կողմից հրապարակված գեկույցներն ու պաշտոնական վիճակագրությունը, Համաշխարհային բանկի կողմից հրապարակվող գեկույցները, ինչպես նաև հեղինակի կողմից կատարված սեփական վերլուծության և գնահատման արդյունքները:

Հետազոտության ընթացքում կիրառվել են տնտեսամաթեմատիկական, վիճակագրական, հետազոտական՝ վերլուծական, ինդուկցիայի և դեդուկցիայի, տնտեսաչափական, փորձագիտական, վերլուծության մեթոդները:

Հետազոտության հիմնական գիտական արդյունքները և նորույթը: Հետազոտության արդյունքում մշակվել և ստացվել են տեսական ու գործնական նշանակության արդյունքներ, որոնց բովանդակությունը կայանում է հետևյալում՝

- համակարգվել և գնահատվել են հարկային վարչարարությունը բնութագրող գործակիցները (եկամտային հարկի(եկամտահարկի), շահութահարկի, ԱԱՀ-ի մասով) և առաջարկվել է հարկային եկամուտների հավաքագրման և դրանց կառավարման կառուցակարգ, որի ներդրման նպատակը ՀՀ-ում հարկային քաղաքականության արդյունավետության, հարկային վարչարարության հիմնախնդիրների լուծման, հարկային բեռի օպտիմալ բաշխման ապահովումն,
- մշակվել է հարկային ներուժի, ստվերային տնտեսության և հարկային վարչարարության փոխազդեցությունը հիմնավորող տնտեսաչափական ձևաչափ և 2000-2013թթ. գնահատվել են հարկային ներուժի հարթեցման գործակիցների ազդեցությունը ստվերային տնտեսության վրա,
- առաջարկվել է հարկային ստուգումների (քանակական և որակական) բարելավման կառուցակարգ, ինչպես նաև վերլուծվել են հարկային վարչարարության բարեփոխման գերակայությունները՝ հարկային վարչարարության, հարկային ստուգումների և ստվերային տնտեսության համատեքստում:

Հետազոտության արդյունքների գործնական նշանակությունը և օգտագործումը: Ատենախոսությունը գիտական հետազոտություն է, որտեղ կատարված վերլուծություններից բխող հետևությունների ու եզրակացությունների հիման վրա արված առաջարկությունները, ինչպես նաև հարկային վարչարարության բարելավման հիմնախնդիրներից ելնելով առաջարկված գնահատումները կարող են օգտագործվել գործադիր և օրենսդիր մարմինների կողմից՝ հարկային օրենսդրական դրույթների ու նորմատիվային ակտերի, բյուջեի եկամուտների կառուց-

վածքային փոփոխությունների ուղղությամբ իրականացվող աշխատանքների կատարման ժամանակ:

Հետազոտության արդյունքները կարող են օգտակար լինել հարկային ծառայողների, գործարարների, սույն հիմնախնդրով զբաղվող հետազոտողների, ինչպես նաև գիտական լայն շրջանակների համար:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրատարակումները:

Ատենախոսության հիմնադրությունները և ուսումնասիրության արդյունքները քննարկվել են ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում: Ատենախոսության հիմնական արդյունքներն ու բովանդակությունն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված 3 գիտական աշխատություններում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության տեքստը շարադրված է 130 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահանվել են հետազոտության նպատակը և խնդիրները: Ներկայացվել են հետազոտության օբյեկտը և առարկան, տեսական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը և ստացված արդյունքների գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «Հարկային վարչարարության տեսական հիմքերը բարեփոխումների արդի փուլում» գլուխը նվիրված է հարկային վարչարարության բովանդակությանը, նրա սկզբունքներին, մեթոդներին և գործառնություններին, ինչպես նաև մրցունակ հարկային համակարգի և հարկային վարչարարության ձևավորման ուղղություններին:

Հայ և օտարազգի հեղինակների կողմից բազմաթիվ ուսումնասիրություններ և վերլուծություններ են նվիրված հարկային վարչարարությանը, դրա արդյունավետությանը, մեթոդներին և գործառնություններին: Մակայն ՀՀ տնտեսության ներկա պայմաններում հարկային վարչարարության բարեփոխման գերակայությունները շարունակում են մնալ արդիական և հրատապ:

Հարկային վարչարարության հիմնախնդիրների վերաբերյալ ուսումնասիրություններ են կատարվել հայ տնտեսագետներից Վ.Լ.Հարությունյանի, Վ.Բ.Բոստանջյանի, Ա.Ռ.Թամազյանի, Ա.Ա.Թավադյանի, Մ.Ս.Մելքոնյանի, Ա.Լ.Ալավերդյանի կողմից: Օրինակ՝ Ա.Թամազյանի կողմից հարկային վարչարարությունը բնորոշվել է որևէ երկրի գործող հարկային համակարգում հարկային օրենսդրության շրջանակներում հարկային հարաբերությունների մասնակիցների (հարկային մարմինների և հարկ վճարողների) միջև ձևավորվող փոխհարաբերությունների և հարկային մարմինների որոշակի գործառնությունների համախմբություն¹:

Ատենախոսությունում վերլուծվել են նաև օտարազգի տնտեսագետների կողմից կատարված վերլուծություններն ու հրապարակումները՝ հարկային վարչարարության հիմնախնդիրների վերաբերյալ: Օրինակ՝ Օ.Ի.Պոնոմարյովը, Տ.Վ.Բոգատիրևը գտնում են, որ «Հարկային վարչարարությունը կառավարման տեսությունում ձևական, մաքուր վարչարարական, հրամայական ձևերի և մեթոդների ամբողջություն է»²:


Առաջարկվել է հարկային վարչարարության վերափոխման կառուցակարգ՝ հիմք ընդունելով հարկային եկամուտների հավաքագրման և դրանց կառավարման համակարգում բարեփոխումների իրականացման անհրաժեշտությունը:

Հարկային վարչարարության ցածր մակարդակն առաջին հերթին ազդում է տնտեսվարող սուբյեկտների վրա: Հետևաբար՝ հարկային վարչարարության բարեփոխումների նպատակը գործարար ակտիվության բարձրացումն է, իսկ

¹ Թամազյան Արմեն, «Հարկային օրենսդրության հիմունքներ».–Եր.: Տիգրան Մեծ, 2003, էջ 21:

² Пономарев А.И., Игнатова Т.В., Богатырев М.А. Налоги и налоговое администрирование в Российской Федерации: учеб. М.: Финансы и статистика, 2011. с. 548, Аронов А.В., Кашин В.А. Налоговая политика и налоговое администрирование: учеб. пособие. М.: Экономистъ, 2006. с. 29-33.

Էթե այն չի հաջողվում, պետությունը վերանայում է հարկային վարչարարության բարեփոխումների գերակայությունները և շտկելով դրանց թերացումները նպաստում է հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացմանը: Հարկային մարմինների խնդիրն է ապահովել հարկային եկամուտներ պետական բյուջեում կամ բացահայտել ստվերում գործող տնտեսվարող սուբյեկտներին՝ ցույց տալով հարկային ներուժի գումարները: Այսինքն՝ հարկային պլանավորման և հարկային վարչարարության տեսանկյուններից հարկային մարմինները յուրաքանչյուր տարի կատարելագործում են հարկային ստուգումների մակարդակը՝ նպատակ ունենալով կրճատել ստվերային գործարքները: Ինչ վերաբերում է հարկային վարչարարության գործառույթներին, ինչպիսիք են հաշվառումը, հարկային պլանավորումը, կարգավորումը, վերահսկողությունը և խթանումը, դրանց նպատակը հարկային հաշվառման իրականացումն է (գծապատկեր 1):



Գծապատկեր 1. Հարկային վարչարարության գործառույթներն ու խնդիրները

Աշխատանքում ներկայացվել են մրցունակ հարկային համակարգի և հարկային վարչարարության ձևավորումն ու զարգացման նախադրյալները: Բացի այդ, վերլուծվել են մրցունակության 12 հիմնասյուները, որոնք հիմնավորվել են նաև հարկային վարչարարության տեսանկյունից:

Ատենախառության երկրորդ «ՀՀ հարկային վարչարարության բարեփոխման գերակայությունների գնահատման հիմնախնդիրները» **գլխում** ներկայացվել են հարկային համակարգի ձևավորման առանձնահատկությունները, հարկային ներուժի բացահայտման և հարկման արդյունավետության բարձ-

րացման հիմնախնդիրները, ինչպես նաև հարկային ստուգումների ազդեցությունը հարկային վարչարարության վրա:

Հարկային վարչարարության բարեփոխումների վերաբերյալ պատկերացում կազմելու համար ուսումնասիրվել է 2000թ.-ից մինչ 2013թ.-ի հարկային եկամուտների դինամիկան: Այդ առումով, ընտրվել են հարկային եկամուտներից միայն՝ եկամտահարկը (եկամտային հարկ), շահութահարկն ու ԱԱՀ-ը, իսկ մյուս հարկատեսակները սույն վերլուծության ժամանակ չեն ներառվել, այն պարզ պատճառով, որ դրանք ուսումնասիրվել են բազմաթիվ աշխատություններում, թեկնածուական ատենախոսություններում, երկրորդ՝ խնդիրը այս 3 հարկատեսակների գծով հարկային թույլ վարչարարության հիմնավորումն է (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Հարկային եկամուտները՝ ըստ ԱԱՀ-ի, եկամտահարկի (եկամտային հարկ) և շահութահարկի 2000-2013թթ.-ին, մլրդ. ՀՀ դրամ³

| | 2000թ. | 2001թ. | 2002թ. | 2003թ. | 2004թ. | 2005թ. | 2006թ. | 2007թ. | 2008թ. | 2009թ. | 2010թ. | 2011թ. | 2012թ. | 2013թ. |
|--------------------|--------|--------|--------|--------|--------|--------|--------|--------|--------|--------|--------|--------|--------|--------|
| ԱԱՀ | 66.8 | 79.5 | 95 | 107.8 | 117.9 | 146.8 | 165.9 | 248 | 318.3 | 254 | 301.7 | 328.4 | 369.6 | 401.9 |
| Եկամտահարկ | 13.4 | 11.2 | 12.5 | 16.8 | 20.4 | 26.6 | 35.5 | 46.8 | 53.8 | 60.2 | 73.9 | 81.2 | 91.6 | 256.9 |
| Շահութահարկ | 20.4 | 16.3 | 17.4 | 17.6 | 32 | 46.6 | 65.3 | 75.5 | 86.2 | 80.8 | 77.8 | 97.8 | 118.6 | 124.6 |

Աղյուսակ 1-ում առանձնացվել են եկամտահարկը(եկամտային հարկ), շահութահարկը և ԱԱՀ-ը հարկային այլ եկամուտներից, որոնց ուղղությամբ էլ հետագայում ցույց են տրվելու հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման հետ կապված մոտեցումները և հիմնավորվելու են դրանց բարելավման հետ կապված առաջարկությունները:

Նշված հարկատեսակների մասով 2000-2007թթ. ՀՀ պետական բյուջեում ԱԱՀ-ի, եկամտահարկի և շահութահարկի մեծությունների միջինը կազմել են համապատասխանաբար՝ 128.5 մլրդ դրամ, 22.9 մլրդ դրամ, 36.4 մլրդ դրամ: Համաշխարհային ֆինանսատեսակական ճգնաժամի տարիներին՝ 2007-2009թթ., այդ հարկատեսակների միջինը կազմել են համապատասխանաբար 273.5 մլրդ դրամ, 53.6 մլրդ դրամ, 80.8 մլրդ դրամ՝ 2000-2007թթ.-ի համեմատ հավելաճի տեմպը կազմելով 53%, 52.7%, 55% (աղյուսակ 1):

Ճգնաժամի հաղթահարման տարիներին և հետո 2009-2013թթ պետական բյուջեի հարկային եկամուտներում ԱԱՀ-ի, եկամտահարկի և շահութահարկի միջինը կազմել են համապատասխանաբար 333.1 մլրդ դրամ, 62.5 մլրդ դրամ, 99.9 մլրդ դրամ՝ 2007-2009թթ.-ի համեմատ հավելաճի տեմպը կազմելով 17.9%, 14.2%, 19.1%: Այն պայմանավորված է նրանով, որ 2007 թ.-ից հետո ՀՀ հարկային օրենսդրությունում տեղի ունեցան փոփոխություններ պայմանավորված

³ <http://armstat.am/am/?nid=82&id=1418>.

Համեմատության համար նշվել է, որ 2013թ. ԵՄ երկրներում և ԱՄՆ-ում ուղղակի հարկերի և անուղղակի հարկերի տեսակարար կշիռների հարաբերակցությունը ՀՆԱ-ում միջինը կազմել է 38% և 28.4% (գծապատկեր 3), այսինքն՝ զարգացած երկրներում ՀՆԱ-ում գերակշռում են ուղղակի հարկերը, իսկ դրա վճարողը գործարար հատվածն է: Ատենախոսությունում մանրամասն վերլուծվել և գնահատվել են հետանցումային երկրների հարկային վարչարարությունները, որի արդյունավետության բարձրացումը պայմանավորված է հարկային կառուցակարգերի ճկունությամբ:

ՀՀ-ում հարկային վարչարարության բարեփոխման անհրաժեշտությունը պայմանավորված է հարկման արդյունավետության ցածր մակարդակով: Դրանից ելնելով առաջարկվել է ՀՀ հարկային վարչարարության բարեփոխումների իրականացման արդի փուլում գործնականում կիրառել «հարկի արդյունավետության գործակցի» եզրույթը: Այն հանդես է գալիս որպես հարկային բեռի (հարկեր/ՀՆԱ) և հարկային դրույքաչափի հարաբերակցություն:

Քանի որ հանրապետությունում առավել խոցելի են ԱԱՀ-ը, շահութահարկն ու եկամտային հարկը, հետևաբար, հարկի արդյունավետության գործակցի միջոցով հնարավորություն կըստեղծվի վերանայել գործող հարկատեսակների դրույքաչափերն ու հավաքագրումները և իրականացնել դրանց ուղղությամբ հասցեավորված հարկային բարեփոխումներ:

Այսպես, «հարկի արդյունավետության գործակցի» եզրույթը հիմնավորվել է՝ ըստ ԱԱՀ-ի, ե կամտահարկի(եկամտային հարկ) և շահութահարկի: Այստեղ անուղղակի հարկերից ակցիզային հարկը չի դիտարկվել այն պատճառով, որ թվարկված հարկատեսակների ուսումնասիրության տվյալներ են հանդիսացել հարկվող շրջանառությունը և հարկային դրույքաչափը: Ակցիզային հարկի հարկվող շրջանառությունը՝ ըստ տարբեր ապրանքների, տարբեր է, ինչպես նաև տարբեր են դրանց հարկային դրույքաչափերը:

ԱԱՀ «ԱԱՀ-ի արդյունավետության գործակցի» հաշվարկվել է ԱԱՀ-ի բեռի և ԱԱՀ դրույքաչափի հարաբերակցությամբ: Աղյուսակ 2-ում մշակվել են ԱԱՀ-ի արդյունավետության գործակցները և ստացվել են տվյալ արդյունքները: ԱԱՀ-ի արդյունավետության գործակցի աճը պայմանավորված է ԱԱՀ/ՀՆԱ-ի բարձրացմամբ, քանի որ ԱԱՀ-ի դրույքաչափը 2007-2013թթ. չի փոխվել՝ կազմելով 20%: ԱԱՀ-ի արդյունավետության գործակցի բարձրացել է միայն 2008թ.՝ կազմելով 0.62:

Աղյուսակ 2

2007-2013թթ. ԱԱՀ-ի արդյունավետության գնահատականը ՀՀ-ում⁵

| | 2007թ. | 2008թ. | 2009թ. | 2010թ. | 2011թ. | 2012թ. | 2013թ. |
|-------------------------------|--------|--------|--------|--------|--------|--------|--------|
| ԱԱՀ մյրդ դրամ | 226,1 | 318,3 | 254,2 | 301,7 | 328,5 | 369,7 | 401,9 |
| ԱԱՀ/ՀՆԱ,% | 7,2 | 12,4 | 8,1 | 8,7 | 8,7 | 9,2 | 9,4 |
| ԱԱՀ դրույքաչափ% | 20 | 20 | 20 | 20 | 20 | 20 | 20 |
| ԱԱՀ արդյունավետություն | 0,36 | 0,62 | 0,40 | 0,44 | 0,43 | 0,46 | 0,47 |

⁵ <http://armstat.am/am/?nid=82&id=1418>.

Այն պայմանավորված է ֆինանսական ճգնաժամի առաջացման հետ, որի ժամանակ կրճատվում են ուղղակի հարկային եկամուտները, իսկ, ի տարբերություն, ուղղակի հարկերի ԱԱՀ-ը հավաքագրվում է անուղղակիորեն վերջնական սպառումից: Հետևաբար՝ այն բացասաբար է անդրադառնում հարկային վարչարարության վրա, քանի որ այլ հարկ վճարողների հարկերի հայտարարագրման և հարկային ծառայողների հարկազանձման միջև առաջանում է «ճեղքվածք» ավելացնելով սովորական գործարքները:

Աղյուսակ 3

2013թ. ԱԱՀ-ի արդյունավետության համեմատական գնահատականը արտերկրում⁶ և Հայաստանում

| Երկիր | ԱԱՀ-ի դրույ- քայակ, % | ԱԱՀ-ի բեռը (ԱԱՀ/ՀՆԱ, %) | ԱԱՀ-ի արդյունավե- տության գործակից ⁷ |
|-----------|--------------------------|----------------------------|--|
| Ալբանիա | 20 | 9.1 | 0.46 |
| Հայաստան | 20 | 9.4 | 0.47 |
| Ադրբեջան | 18 | 4.4 | 0.24 |
| Բելառուսի | 20 | 8.9 | 0.45 |
| Ղազախստան | 12 | 3.2 | 0.27 |
| Մոլդովա | 20 | 12.7 | 0.64 |
| Ռուսաստան | 18 | 6.0 | 0.33 |
| Թուրքիա | 18 | 6.3 | 0.35 |
| Ուկրաինա | 20 | 9.0 | 0.45 |

Աղյուսակ 3-ից հետևում է, որ որքան բարձր է ԱԱՀ-ի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում, այնքան ավելանում է ԱԱՀ-ի արդյունավետության գործակիցը, իսկ դա նշանակում է, որ ԱԱՀ-ի հոսքերի կառավարման արդյունավետությունը բարձր է: Իսկ ԱԱՀ/ՀՆԱ-ի ցուցանիշի մասով ամենաբարձրը Մոլդովայում է, հետևաբար՝ մեծ է նաև այդ երկրում ԱԱՀ-ի արդյունավետությունը՝ 0.64: Համեմատության համար նշվել է, որ Մոլդովայում և Հայաստանում ԱԱՀ-ի դրույքաչափը նույնն է՝ 20%:

Եկամտային հարկ (եկամտահարկ): Եկամտային հարկի արդյունավետության գործակիցը հաշվարկվում է եկամտային հարկի(եկամտահարկ) բեռի և դրա դրույքաչափերի հարաբերակցությամբ:

Եկամտային հարկի (եկամտահարկ) արդյունավետության գործակիցը 10% և 20%-ի դեպքում ամենաբարձրն արձանագրվել է 2007 թ.-ին՝ 0.2, որն ուղեկցվել է զբաղվածների մոտ հարկային հաշվառման խստացմամբ և վերահսկողություն ուժեղացմամբ: Եկամտային հարկի անցման դեպքում ամենաբարձրը եղել է եկամտային հարկի հավաքագրումների և եկամտային հարկ/ՀՆԱ-ի տեսանկյուններից 2013թ.-ին՝ 256.9 մլրդ դրամ, 6%, այդ տարում եկամտային հարկի

⁶ <http://ec.europa.eu/eurostat/documents/4187653/5764173/KS-PB-03-006-EN.PDF/8b646621-5ef8-46a3-a5f4-53c0141fa7af?version=1.0>.

⁷ Հաշվարկվել է՝ հիմք ընդունելով http://armstat.am/file/article/sv_12_12a_211.pdf.

արդյունավետության գործակիցը 24.4%, 26% և 36% դրույքաչափերի դեպքում կազմել է 0.2 (աղյուսակ 4):

Աղյուսակ 4

2007-2013թթ. Եկամտահարկի արդյունավետության գնահատականը ՀՀ-ում

| Ցուցանիշներ | 2007 | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 | 2013 |
|--|------|------|------|------|------|--------|--------|
| Եկամտային հարկ, մլրդ դրամ | 74,6 | 53,7 | 60,2 | 73,9 | 81,2 | 91,7 | 256,9 |
| Եկամտային հարկ/ՀՆԱ,% | 2,4 | 2,1 | 1,9 | 2,1 | 2,1 | 2,3 | 6 |
| Եկամտահարկի և եկամտային հարկի դրույքաչափեր | 10 | 10 | 10 | 10 | 10 | 24,4 | 24,4 |
| | 20 | 20 | 20 | 20 | 20 | 26; 36 | 26; 36 |
| Եկամտահարկի և եկամտային հարկի արդյունավետության որձակիցներ | 0,2 | 0,2 | 0,2 | 0,2 | 0,2 | 0,1 | 0,2 |
| | 0,1 | 0,1 | 0,1 | 0,1 | 0,1 | 0,1 | 0,2 |

Թուրքիայում եկամտահարկի դրույքաչափը դիտարկված երկրներում ամենաբարձրն է՝ 35%, եկամտահարկ/ՀՆԱ-ն կազմում է 3.7%, իսկ եկամտային հարկի արդյունավետության գործակիցը ցածր է՝ 0.11:

Աղյուսակ 5

2013թ. եկամտահարկի (եկամտային հարկ) արդյունավետության համեմատական գնահատականը արտերկրում⁸ և Հայաստանում

| Երկիր | Եկամտային հարկի դրույքաչափ, % | Եկամտային հարկի բեռը (եկամտային հարկ/ՀՆԱ, %) | Եկամտային հարկի արդյունավետության գործակից ⁹ |
|------------|-------------------------------|--|---|
| Ալբանիա | 10 | 2.1 | 0.21 |
| Հայաստան | 24.4 | 6 | 0.25 |
| Հայաստան | 26 և 36 | 6 | 0.23 և 0.17 |
| Ադրբեջան | 30 | 2.2 | 0.07 |
| Բելոռուսիա | 12 | 1.4 | 0.27 |
| Ղազախստան | 10 | 3.2 | 0.12 |
| Մոլդովա | 7 | 1.4 | 0.2 |
| Ռուսաստան | 13 | 2.2 | 0.17 |
| Թուրքիա | 35 | 3.7 | 0.11 |
| Ուկրաինա | 15 | 3.6 | 0.24 |

Ամենացածր դրույքաչափը Մոլդովայում է 7%, եկամտային հարկ/ՀՆԱ-ն՝

⁸ http://appsso.eurostat.ec.europa.eu/nui/show.do?dataset=gov_10a_main&lang=en.

⁹ Հաշվարկվել է՝ հիմք ընդունելով http://armstat.am/file/article/sv_12_12a_211.pdf.

1.4%, իսկ արդյունավետության գործակիցը՝ 0.2 : Ամենաբարձր եկամտային հարկի արդյունավետության գործակից է արձանագրվել Բելոռուսիայում՝ 0.27՝ եկամտային հարկի 12 և եկամտային հարկի բեռի 1.4% դեպքում (աղյուսակ 5):

Շահութահարկ: «Շահութահարկի արդյունավետության գործակիցը» հաշվարկվում է շահութահարկի բեռի և շահութահարկի դրույքաչափի հարաբերակցությամբ: Աղյուսակ 6-ից կարող ենք եզրակացնել, որ 2008թ.ամենաբարձրն է արձանագրվել շահութահարկ/ՀՆԱ ցուցանիշի համար՝ 3.4%, որը պայմանավորված է ճգնաժամի տարում հարկային վերահսկողության ուժեղացմամբ: Բացի այդ, շահութահարկի արդյունավետության ամենաբարձր գործակիցը արձանագրվել է դարձյալ 2008 թվականին՝ 0.17: 2012-2013թթ. շահութահարկի արդյունավետության գործակիցը կայուն է և կազմել է 0.15՝ նույն շահութահարկի դրույքաչափի դեպքում:

Աղյուսակ 6

ՀՀ շահութահարկի արդյունավետության համեմատական գնահատականը Հայաստանում 2013թ.-ին¹⁰

| | 2007 | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 | 2013 |
|---|------|------|------|------|------|-------|-------|
| Շահութահարկ | 46,8 | 86,2 | 81,8 | 77,8 | 97,8 | 118,7 | 124,6 |
| Շահութահարկ/ՀՆԱ, % | 1,5 | 3,4 | 2,6 | 2,2 | 2,6 | 3,0 | 2,9 |
| Շահութահարկի դրույքաչափ, % | 20 | 20 | 20 | 20 | 20 | 20 | 20 |
| Շահութահարկի արդյունավետության գործակից¹¹ | 0,07 | 0,17 | 0,13 | 0,11 | 0,13 | 0,15 | 0,15 |

Շահութահարկի արդյունավետության ամենաբարձր գործակիցը 2013թ. կազմել է Ղազախստանում՝ 0.41՝ 20% շահութահարկի դրույքի և 8.2% շահութահարկ/ՀՆԱ ցուցանիշների պայմաններում: Շահութահարկի արդյունավետության ամենացածր գործակիցը արձանագրվել է Մոլդովայում 0.006, շահութահարկի դրույքաչափը և շահութահարկի բեռը կազմելով համապատասխանաբար՝ 12%, 0.7% (աղյուսակ 7):

Այսպիսով՝ հաշվարկման արդյունքները ցույց են տալիս, որ որքան հարկման արդյունավետության գործակիցը (ԱԱՀ, շահութահարկ, եկամտային հարկ) մոտ է 1-ի տվյալ հարկատեսակի և դրույքաչափի դեպքում, այդ հարկատեսակի գծով բարձր է հավաքագրումների մակարդակը, ուստի, բարձր է նաև հարկային համակարգի կառավարման մակարդակը: Հարկային վարչարարության բարեփոխումների համար ոչ թե անհրաժեշտ է փոխել հարկային դրույքաչափերը, այլ՝ հարկերի ավելացումը ՀՆԱ-ում:

Տրվել է հարկային ներուժի և ստվերային տնտեսության միջև գոյություն ունեցող փոխառնչությունները, ինչպես նաև մշակվել է տնտեսաչափական ձևաչափ, որի հաշվարկման արդյունքում ստացվել են դրանց տոկոսային և բացարձակ մեծությունները:

¹⁰ http://armstat.am/file/article/sv_12_12a_211.pdf.

¹¹ Հաշվարկվել է՝ հիմք ընդունելով http://armstat.am/file/article/sv_12_12a_211.pdf ը:

Շահութահարկի արդյունավետության համեմատական գնահատականը արտերկրում¹² և Հայաստանում 2013թ.-ին

| Երկիր | Շահութահարկի դրույթային, % | Շահութահարկի բեռը (շահութահարկ / ՀՆԱ, %) ¹³ | Շահութահարկի արդյունավետության գործակից ¹⁴ |
|-----------|----------------------------|--|---|
| Ալբանիա | 10 | 1.5 | 0.15 |
| Հայաստան | 20 | 2.9 | 0.15 |
| Ադրբեջան | 20 | 4.3 | 0.22 |
| Բելառուսի | 24 | 3.1 | 0.13 |
| Ղազախստան | 20 | 8.2 | 0.41 |
| Մոլդովա | 12 | 0.7 | 0.006 |
| Ռուսաստան | 20 | 4.2 | 0.21 |
| Թուրքիա | 20 | 1.9 | 0.10 |
| Ուկրաինա | 25 | 4.1 | 0.16 |

Բացի այդ, նշվել է, որ ոչ միշտ է հնարավոր փաստացի հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը հավասարեցնել նրա պոտենցիալ մակարդակին կամ հարկային ներուժի մեծությանը՝

1. Հարկային մարմիններին ոչ միշտ է հաջողվում հավաքագրել հարկային եկամուտները կամ փաստացի հարկային եկամուտները (T) փոքր են լինում հարկային ներուժի (T_վ) մեծությունից՝ T < T_վ;
2. Կատարյալ տնտեսության պայմաններում հարկ վճարողները չեն խուսափում հարկերը վճարելուց, իսկ հարկային մարմինները մշտապես բացահայտում են օրինազանց տնտեսվարող սուբյեկտներին հարկերից խուսափելու համար՝ նվազեցնելով կոռուպցիոն ռիսկն ու ստվերային գործարքները՝ T = T_վ:

Հիմնական խնդիրն այն է, որ փաստացի հարկերի և դրա պոտենցիալ մակարդակի միջև առաջանում է շեղում, որը բավականին դժվար է արժանահավատ գնահատել: Վերջինիս վրա ազդում են բազմաթիվ գործոններ, օրինակ՝ դիսկրեցիոն հարկային քաղաքականությունը, գործարար հատվածի և հարկային մարմինների փոխառնչությունները, դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների կապը, արտահանման և ներմուծման ռազմավարությունները արտաքին տրանսֆերտները, փոխարժեքային տատանումները, տնտեսվարող սուբյեկտների ստվերային գործարքների նկատմամբ հակվածությունը, տնտեսական ցիկլերը և ճրգնաժամերը: Ատենախոսությունում առաջարկվել է հարկային ներուժի մակարդակի հետևյալ ձևաչափը՝

$$T_v^u = a_0 + a_1X_1 + a_2X_2 + a_3X_3 + a_4X_4 + a_5X_5 + \epsilon \quad (1)$$

¹² Zelekhia Y., Sharabi E Tax Incentives and Corruption: Evidence and Policy Implications // International Journal of Economic Sciences. 2012. Vol. 1 (No.2). p.138- 159.

¹³ http://www.taxservice.am/Shared/Documents/Publications/th_annual_report_2012.pdf.

¹⁴ Այն հաշվարկվել է՝ հիմք ընդունելով http://armstat.am/file/article/sv_12_12a_211.pdfը:

որտեղ՝

T_i^v - հարկային ներուժի մակարդակն է t -րդ տարում,

t - տարիների թիվն է, որն ընդգրկում է 2000 -2013թթ.,

X_{1t} , X_{2t} , X_{3t} , X_{4t} , X_{5t} - հարկատեսակների տեսակարար կշիռներն են հարկային եկամուտներում, որոնք ազդում են հարկային ներուժի վրա,

X_{1t} -ն՝ t -րդ տարում ավելացված արժեքի հարկի տեսակարար կշիռն է փաստացի հարկային եկամուտներում,

X_{2t} -ն՝ t -րդ տարում շահութահարկի տեսակարար կշիռն է փաստացի հարկային եկամուտներում,

X_{3t} -ն՝ t -րդ տարում եկամտահարկի տեսակարար կշիռն է փաստացի հարկային եկամուտներում,

X_{4t} -ն՝ t -րդ տարում հաստատագրված վճարների տեսակարար կշիռն է փաստացի հարկային եկամուտներում,

X_{5t} -ն՝ t -րդ տարում ակցիզային հարկի տեսակարար կշիռն է փաստացի հարկային եկամուտներում,

$a_0, a_1, a_2, a_3, a_4, a_5$ ՝ այն գործակիցներն են, որոնք ենթակա են համահունչ որոշման,

ε_t -ն՝ t -րդ տարում տնտեսաչափական ձևաչափի պատահական սխալն է :

Փաստացի հարկային եկամուտներ/ՀՆԱ հարաբերակցության և հարկային ներուժի մեծությունների տարբերությունը շեղման գործակիցն է, ինչը ցույց է տալիս հարկ վճարողների հարկերից խուսափելու հակվածությունը: Իսկ փաստացի հարկային եկամուտների և հարկային ներուժի միջև գոյություն ունի հետևյալ փոխառնչությունը՝

$$\theta = 1 - (T_i^v - T_i) / T_i \times 100 \quad (2)$$

որտեղ՝

θ -ն՝ ստվերային տնտեսությունը բնութագրող ցուցանիշն է, որը ցույց է տալիս, թե փաստացի հավաքագրված հարկային եկամուտները որքան են շեղվում հարկային ներուժի մակարդակից:

Ընդհանուր առմամբ այն պետք է, որ տատանվի [0-1] միջակայքում, այս - ինքն՝ այն որքան մոտ է 1-ին, այնքան փաստացի հարկերը հասնում են հարկային ներուժին ավելի արագ:

Փաստորեն, ստացանք (2) բանաձևը, որի օգնությամբ կարող ենք հաշվարկել փաստացի հարկային եկամուտների կանխատեսվող արժեքը, քանի որ բոլոր փոփոխականների վերաբերյալ արդեն գոյություն ունեն վիճակագրական տվյալներ: Հարկային ներուժի տնտեսաչափական ձևաչափը գնահատենք փոքրագույն քառակուսիների մեթոդով՝ նախապես ապահովելով տրնտեսաչափական վերլուծության հավաստի արդյունքներ ստանալու նախապայմանները՝

$$T_i = 2.5 + 0.32x_{1t} + 0.13x_{2t} + 0.18x_{3t} - 0.69x_{4t} + 0.12x_{5t} + 0.79T_{t-1} - 0.17T_{t-2} - 0.26\varepsilon_{t-1} \quad (3)$$

որտեղ՝

T_i -ն՝ փաստացի հարկային եկամուտների կանխատեսվող արժեքն է,

T_{t-1} -ին տարվա հարկային եկամուտներն են,

T_{t-2} - 2-րդ տարվա հարկային եկամուտներն են,

ε_{t-1} -ն ձևաչափի մնացորդն է $t-1$ -րդ ժամանակահատվածում:

Բանաձև 3-ում միջանկյալ գնահատված ձևաչափի գործակիցների օգնությամբ կարելի է գտնել $a_0, a_1, a_2, a_3, a_4, a_5$ անհայտ պարամետրերի գնահատված


արժեքները, ինչպես նաև θ շեղման գործակիցը՝ գտնելու համար պոտենցիալ հարկային եկամուտները.

$$\theta=0.21; a_0=11.9; a_1=1.52; a_2=0.61, a_3=0.85; a_4=-3.28; a_5=0.57$$

Ստացված գործակիցներից $a_0, a_1, a_2, a_3, a_4, a_5$ պոտենցիալ հարկային եկամուտների ձևաչափի գործակիցների գնահատականներն են: Առավել հետաքրքրական է $\theta=0.21$ գործակիցը, որը նշանակում է՝ փաստացի հարկային եկամուտները հասնում են իրենց պոտենցիալ մակարդակին բավականին դանդաղ:

Այսպիսով՝ ամփոփելով բերված բանաձևերը հաշվարկվել է 2000-2013թթ. ՀՀ հարկային ներուժի մեծությունը

$$T_t^{15} = 11.90 + 1.52x_{1t} + 0.61x_{2t} + 0.85x_{3t} + 3.28x_{4t} + 0.57x_{5t} \quad (4)$$




Գծապատկեր 2. Հարկային ներուժի հարթեցման գործակիցների և ստվերային տնտեսության դինամիկան ՀՀ-ում 2000-2013թթ.-ին ¹⁵

Բանաձև (4)-ի միջոցով հիմնավորվել է, որ հնարավոր է ՀՀ-ում հաշվարկել հարկային ներուժի մեծությունը 2000-2013թթ., ինչպես նաև վերլուծվել են հարկային ներուժի և փաստացի հարկեր/ՀՆԱ հարաբերակցության շեղումը արտահայտող գործակիցները՝ ստացված արդյունքները ներկայացնելով գծապատկեր 2-ում: Ընդ որում, վերջինիս միջոցով գնահատվել են ՀՀ-ում հարկային ներուժի հարթեցման գործակիցների և ստվերային տնտեսության դինամիկան 2000-2013թթ.: Այսպես, 2000-2013թթ. հարկային ներուժի հարթեցման գործակիցների միջինը կազմում է 42.5%, ստվերային տնտեսության միջին մեծությունը 57.5%: Հարկ ենք համարում նշել, որ հանրապետությունում 2000թ. հարկային ներուժի հարթեցման գործակիցն ամենաբարձրն է եղել՝ 51.1%,՝ կազմելով 31797.2 մլն. ՀՀ դրամ, մինչդեռ ստվերային տնտեսության ծավալները ամենացածրն են եղել՝ 48.9% կամ 503989.5 մլն ՀՀ դրամ:

Ատենախոսության երրորդ «Հարկային վարչարարության բարելավման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում» **գլխում** ներկայացվել են հարկային վարչարարության բարելավման և

¹⁵ Գծապատկեր 2-ը հաշվարկվել է՝ հիմք ընդունելով բանաձևեր (1),(2) և (3):

մրցունակ հարկային համակարգի ձևավորման ուղիները, կատարվել են հարկ վճարողների ստվերային գործարքների հակվածության վերլուծություններ և տրվել են դրանց բացահայտման առաջարկությունները, ինչպես նաև հիմնավորվել են հարկային վարչարարության բարելավման և ստվերային տնտեսության կրճատման ուղիները ՀՀ-ում:



Գծապատկեր 3. Հարկային վարչարարությունը գնահատող ցուցանիշների համակարգը՝ ըստ կազմակերպչարվական կառուցվածքի, (տոկոսային արտահայտությամբ) 2011-2013թթ.-ին¹⁶

ՀՀ-ում խոշոր և միջին չափի ընկերությունների գործունեությունն առավել շատ է խոչընդոտվում հարկային վարչարարության պատճառով: Առևտրի ոլորտի և արտադրող ընկերությունների գործունեությունն համեմատած ծառայություններ մատուցող ընկերությունների հետ առավել շատ է խոչընդոտվելու գործող հարկային վարչարարության պատճառով (գծապատկեր 3): Փոքր բիզնեսի հարկումը առաջին հերթին ենթադրում է հարկման արդարացիության ու հավասարության սկզբունքի ապահովում: Հարկային վարչարարության քայլերը կկապակցվեն փոքր ու միջին բիզնեսի զարգացումը խթանող ծրագրերի հետ, այս թվում՝ նպատակ ունենալով խուսափել տարբեր գերատեսչությունների կողմից նույն տնտեսվարողի մոտ վարչական ստուգումների կրկնությունից:

Հետազոտության հիմնական արդյունքներն ամփոփվել են «**Ներակայացումներ**» բաժնում, որոնց բովանդակությունը կայանում է հետևյալում՝

- Մրցունակ հարկային համակարգը և հարկային վարչարարությունը պայմանավորած են մրցունակությունը բնութագրող 12 հենասյուններով, որոնց վերաբերյալ տրվել են միջազգային կազմակերպությունների և հեղինակի վերլուծության արդյունքները: Բացի այդ, հիմնավորվել են հարկային վարչա-

¹⁶ World Bank Groupe, Report, “The cost of tax compliance in Armenia” Investment climate Advsory Service. Yerevan 2013, pp. 36-37.

րարության բարեփոխման գերակայությունները՝ հիմք ընդունելով շահութահարկի, եկամտային հարկի և ԱԱՀ-ի հարկման առանձնահատկությունները:

- Հարկային վարչարարության բարեփոխման գերակայությունները պայմանավորված են «երկրորդ» սերնդի բարեփոխումներով: Ընդ որում, կարևորվում է ՀՆԱ-ի ձևավորման գործընթացը և դրա վրա ազդող հարկատեսակներն ու հարկային դրույքաչափերը: Աշխատանքում մըշակվել է հարկային վարչարարության գնահատման մոտեցում և հիմնավորվել է դրա արդյունավետության մակարդակը՝ ըստ հարկի արդյունավետության գործակցի: Այսինքն՝ հարկային վարչարարության բարելավման համար անհրաժեշտ է ոչ թե փոխել հարկային դրույքաչափերը, այլ՝ հարկերի ավելացումը ՀՆԱ-ում:
- Մշակվել է հարկային ստուգումները համակարգող կառուցակարգ, հաշվարկվել են հարկային ներուժի հարթեցման գործակիցները, վերլուծվել են դրանց ազդեցությունը սովետային տնտեսության առաջացման վրա, ինչպես նաև՝ դրա մասշտաբների տարածման հետևանքները ՀՀ տնտեսության տարբեր ոլորտներում:
- Սովետային տնտեսության ծավալները ավելանում են հարկային վարչարարության ցածր մակարդակի հետևանքով, իսկ դրա կրճատմանն ուղղված միջոցառումները պետք է պայմանավորված լինեն հարկային վարչարարության արդյունավետության բարձրացմամբ և օրենսդրական դաշտի կատարելագործմամբ: Տնտեսաչափական մեթոդների միջոցով վերլուծվել և գնահատվել են սովետային եկամտների գնահատման անուղղակի մեթոդի գործնական կիրառության արդյունքները :

Առենայխտության հիմնական դրույթները հրապարակվել են հեղինակի հետևյալ գիտական հոդվածներում.

1. Փարսադանյան Ս.Ս., «Հարկային քաղաքականության և հարկային վարչարարության փոխազդեցությունը տնտեսական հարցադրումները ՀՀ-ում»: «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում»: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն: Եր.: 2013, էջ 88-90:
2. Փարսադանյան Ս.Ս., «Հարկերի վճարումից խուսափելու վարքագիծը հարկային պլանավորման համատեքստում»: «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում»: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն: Եր.: 2013, էջ 91-94:
3. Փարսադանյան Ս.Ս., «Հարկային վարչարարության գնահատման տեսական հարցադրումներն ըստ հարկ չվճարելու և հարկային օրենքները խախտելու վարքագծային տեսության»: «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում»: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն: Եր.: 2014, էջ 96-99:

ТАТЕВИК СМБАТОВНА ПАРСАДЯНЯН

ПРИОРИТЕТЫ РЕФОРМИРОВАНИЯ НАЛОГОВОГО АДМИНИСТРИРОВАНИЯ НА СОВРЕМЕННОМ ЭТАПЕ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.03 – “Финансы, бухгалтерский учет”.

Защита диссертации состоится 26-го марта 2015г. в 15.30 часов, на заседании специализированного совета 014 ВАК РА по экономике, действующего в Армянском государственном экономическом университете по адресу: 0025, г. Ереван, ул. М. Налбандяна 128.

РЕЗЮМЕ

Основной целью исследования является выявление проблем налогового администрирования и предложение путей их решения в РА. Для достижения указанной цели в диссертации поставлены и решены следующие задачи:

- охарактеризовать сущность, принципы, методы и функции налогового администрирования;
- выделить анализ существующих научных направлений относительно налогового администрирования, а также систематизировать их по разным группам;
- провести сравнительный анализ налогового администрирования и налогового контроля;
- исследовать направления формирования конкурентоспособной налоговой системы и налогового администрирования;
- провести анализ зарубежного опыта налогового администрирования и рассмотреть возможности его локализации в РА
- оценить налоговый потенциал Республики Армения и факторы, влияющие на него с целью сокращения объемов теневой экономики;
- предложить пути совершенствования налогового администрирования и формирования конкурентоспособной налоговой системы в РА;

Основные научные результаты исследования и их новизна. В ходе исследования разработаны и получены результаты теоретического и практического значения, сущность которых заключается в следующем:

1. Систематизированы и оценены характеризующие налоговое администрирование коэффициенты (подходного налога, налога на прибыль и НДС) и предложен механизм сбора налоговых доходов и управления ими с целью обеспечения эффективности налоговой политики, решения проблем налогового администрирования и оптимального распределения налоговой нагрузки.

2. Разработана эконометрическая модель, отражающая взаимосвязь налогового потенциала, теневой экономики и налогового администрирования, а также дана оценка воздействия коэффициентов корреляции налогового потенциала на теневую экономику.
3. Предложен механизм улучшения налоговых проверок (количественных и качественных), а также проанализированы приоритеты реформ налогового администрирования в контексте налогового администрирования, налоговых проверок и теневой экономики.

TATEVIK SMBAT PARSADANYAN

THE PRIORITIES OF TAX ADMINISTRATION REFORMS AT THE PRESENT STAGE

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the specialty 08.00.03- "Finance, Accounting".

The defense of the thesis will take place on March 26, 2015 at 15.30 o'clock at 014 Council of Economics of the SCC RA at Armenian State University of Economics, 128 Nalbandyan Street, Yerevan 0025.

RESUME

The main purpose of the research is to identify the main issues of tax administration and to propose solutions to address them.

For the above-stated purpose the following objectives were set and met in the dissertation thesis:

- To describe the meaning and the essence, the principles, and the functions of the tax administration;
- To systemize all the existing studies, analyses on tax administration and combine them into various groups;
- To make a comparative analysis of tax administration and control;
- To study approaches that shape and frame a competitive tax system and tax administration;
- To compare the efficiency of the tax administration abroad and consider options for adopting the best practices in the Republic of Armenia;
- To measure the tax potential and identify the factors that affect the tax potential in the Republic of Armenia in order to reduce the size of the shadow economy;
- To propose approaches to shape and frame a competitive tax system and improve the tax administration in the Republic of Armenia;

The main scientific result and the novelty of the research: As a result of the research the following theoretical, practical application results were reported and the meaning of which are the followings:

1. Measures and indicators describing the effectiveness of the tax administration, income, profit and value added taxes have been systemized, and estimated, and a framework for collecting and controlling tax revenues has been proposed;

2. A specific regression model has been constructed to estimate the relations among the tax potential, shadow economy, and tax administration and by estimating the given equation the estimates of the tax potential and shadow economy has been provided for the period 2000-2013;
3. A mechanism (quantitative and qualitative) for improving tax inspection processes has been proposed, and the priorities of the tax administration reforms have been analyzed in the context of the tax administration, tax inspections and shadow economy.